

ՀՏԴ՝ 930.85

DOI: 10.52971/18294316-2024.27.2-28

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱՄՏՈՒՄՆԵՐՆ
ԱՂԲԵԶԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՑԱԽԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ
ՌԱԶՄԱԿԱՆԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ

Արմինե Հ. Տիգրանյան

Երևանի պետական համալսարան, ՀՀ

Անփոփում

Լախարան. 2020 թ. 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո Արցախի մի շարք եկեղեցիներ, համայնքային մշակութային ու կրթական կենտրոններ Ադրբեջանը սկսեց օգտագործել ռազմական նպատակով՝ խաթարելով վերջիններիս մշակութային գործառույթը: Հոդվածի նպատակն է. Միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում քննել Ադրբեջանի կողմից Արցախի հայկական հուշարձանների ռազմական նպատակով օգտագործման դեպքերը 2020-2024 թվականների ընթացքում: Մեթոդներն են նյութերը. Հետազոտությունը կիրառում է բազմամասնագիտական մոտեցում՝ համատեղելով ժառանգության տեսաիրավական վերլուծությունը՝ մշակութային արժեքների գործառույթի փոփոխման և ռազմական նպատակով օգտագործման արձանագրված փաստերին: Վերլուծություն. Հոդվածում ընդգծվում են Ադրբեջանի խախտումները, մարդասիրական նորմերի կիրառման անհրաժեշտությունը, ռազմական նպատակով օգտագործվող Արցախի մշակութային արժեքներին սպառնացող մարտահրավերները՝ առաջարկություններ տրամադրելով զինված հակամարտություններում մշակութային ժառանգության ռազմական նպատակով չօգտագործման և պաշտպանության հրամայականի վերաբերյալ: Արդյունքներ. Ժառանգության՝ ռազմական նպատակներին ծառայեցնելը, վերջինիս հոգևոր-մշակութային գործառույթի խաթարումից զատ, չեզոքացնում է նաև ժառանգության անձեռնմխելիությունը՝ որպես պատերազմներում Հաագայի, Ժնևի կոնվենցիաներով և միջազգային մարդասիրական իրավունքով «պաշտպանված» քաղաքացիական օբյեկտ, իսկ մյուս կողմից առավել խոցելի դարձ-

նում՝ բարձրացնելով ոչնչացման հավանականությունը: Չնայած վերոնշյալ կոնվենցիաներով, ինչպես նաև միջազգային հումանիտար իրավունքով սահմանված արգելքներին՝ Ադրբեջանի կողմից Արցախի հուշարձանների ռազմականացման բացասական հետևանքները ոչ միայն չեն դադարում, այլև շարունակում են աճել՝ վտանգելով թե՛ տարածաշրջանի և թե՛ մոլորակի մշակութային բազմազանությունը:

Բանալի բառեր՝ *միջազգային մարդասիրական իրավունք, զինված հակամարտություն, Արցախ, Ադրբեջան, մշակութային արժեքների ռազմական օգտագործում, ռազմական անհրաժեշտություն, ժառանգությունը որպես սպաստարան:*

Ինչպես հղել՝ Տիգրանյան Ա. Միջազգային մարդասիրական իրավունքի խախտումներն Ադրբեջանի կողմից Արցախի մշակութային արժեքների ռազմականացման դեպքում // ՀՀ ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ»: Գյումրի, 2024: Հ. 2 (27):

28-42 էջեր: DOI: 10.52971/18294316-2024.27.2-28

VIOLATIONS OF INTERNATIONAL HUMANITARIAN LAW IN THE CASE OF AZERBAIJAN'S USE OF THE CULTURAL VALUES OF ARTSAKH FOR MILITARY PURPOSES

Armine H. Tigranyan

Yerevan State University, RA

Abstract

Introduction: During and after the 2020 war, a number of churches, community-based cultural centers, and educational institutions in Artsakh were repurposed by Azerbaijan for military objectives, undermining their cultural functions. The article aims to study the international legal framework governing the use of cultural heritage for military purposes during armed conflicts, with a particular focus on International Humanitarian Law. It seeks to examine specific cases of Azerbaijani forces using Armenian monuments in Artsakh for military purposes from 2020 to 2024. **Methods and Materials:** The research employs a multidisciplinary approach, combining a visual-legal analysis of heritage with documented instances of the changing function of cultural assets and their use for military purposes. **Analysis:** By examining the protections afforded to cultural property under international humanitarian law, the article underscores Azerbaijan's violations and the need for the application of humanitarian norms. It explores the challenges facing the cultural values of Artsakh, which have been repurposed for military purposes, and offers recommendations on the imperative to prevent such use and to safeguard cultural heritage during armed conflicts. **Results:** When cultural heritage is repurposed for military objectives, its spiritual and cultural functions are disrupted, and its integrity as a civilian object, "protected" under the Hague and Geneva Conventions and international humanitarian law, is compromised. This transformation also increases the vulnerability of heritage sites, heightening the risk of their destruction. Despite the prohibitions established by the Hague and Geneva Conventions and international humanitarian law, Azerbaijan's militarization of Artsakh's monuments continues, exacerbating the threat to the region's cultural diversity, which holds significance for the entire world.

Key words: *International humanitarian law, protection of cultural heritage, armed conflict, Artsakh Azerbaijan, military use of cultural values, military necessity, war crime.*

Citations: Tigranyan A. *Violations of international humanitarian law in the case of azerbaijan's use of the cultural values of artsakh for military purposes* // "Scientific works" of SCAS NAS RA. Gyumri, 2024. V. 2 (27). 28-42 pp.. DOI: 10.52971/18294316-2024.27.2-28

НАРУШЕНИЯ МЕЖДУНАРОДНОГО ГУМАНИТАРНОГО ПРАВА В СЛУЧАЕ ИСПОЛЬЗОВАНИЯ КУЛЬТУРНЫХ ЦЕННОСТЕЙ АРЦАХА АЗЕРБАЙДЖАНОМ В ВОЕННЫХ ЦЕЛЯХ

Армине А. Тигранян

Ереванский государственный университет, РА

Аннотация

Предисловие: Во время и после 44-дневной войны 2020 года ряд церквей, культурных и образовательных центров общин Арцаха были использованы Азербайджаном в военных целях, что подорвало их культурную функцию. **Цель статьи:** Статья рассматривает конкретные случаи использования азербайджанскими силами армянских памятников Арцаха в военных целях в период с 2020 по 2024 годы. **Методы и материалы:** В исследовании применяется междисциплинарный подход, сочетающий визуально-правовой анализ наследия с документально зафиксированными фактами изменения функции культурных ценностей и их использования в военных целях. **Анализ:** Изучая защиту культурных ценностей в рамках международного гуманитарного права, статья подчеркивает нарушения, допущенные Азербайджаном, и необходимость применения гуманитарных норм. В ней рассматриваются вызовы, угрожающие культурным ценностям Арцаха, использованным в военных целях, и приводятся рекомендации, касающиеся необходимости запрещения использования объектов культурного наследия в военных целях и защиты этих объектов в условиях вооруженных конфликтов. **Результаты:** Изменение функции объектов культурного наследия для использования в военных целях не только нарушает их духовную и культурную функцию, но и подрывает их целостность как гражданских объектов, «защищенных» Гаагскими и Женевскими конвенциями и международным гуманитарным правом в условиях войны. Кроме того, это делает их более уязвимыми, увеличивая вероятность их разрушения. Несмотря на запреты, установленные конвенциями, а также международным гуманитарным правом, негативные последствия милитаризации памятников Арцаха Азербайджаном не только не прекращаются, но продолжают нарастать, ставя под угрозу культурное многообразие региона и планеты.

Ключевые слова: *международное гуманитарное право, защита культурного наследия, вооруженный конфликт, Арцах, Азербайджан, военное использование культурных ценностей, военная необходимость, военное преступление.*

Как цитировать: Тигранян А. *Нарушения международного гуманитарного права в случае использования культурных ценностей Арцаха Азербайджаном в военных целях.* // "Научные труды" ШЦАИ НАН РА. Гюмри, 2024. Т. 2(27). 28-42 сс. DOI: 10.52971/18294316-2024.27.2-57

ՆԵՐՄՈՒԹՅՈՒՆ. Զինված հակամարտություններում մշակութային ժառանգության պահպանումը համընդհանուր մտահոգությունների տիրույթում գտնվող խն-

դիր է, որը շուրջ երկու դար է, ինչ միջազգային հանրությանն իր բազմաթիվ կոնվենցիաներով և հռչակագրերով մղում է այն պաշտպանելու հանձնառությանը թե՛ խաղաղ և թե՛ պատերազմների ժամանակ [13, էջեր 1256-1257]: Պատերազմի ժամանակ մշակութային արժեքների պաշտպանությունն ամրագրող հիմնական փաստաթղթերն են «Ձինված բախումների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» 1954թ. Հաագայի կոնվենցիան իր երկու արձանագրություններով [20, 21, 22], 1949 թ. Ժնևի կոնվենցիաներն ու համապատասխան արձանագրությունները, ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Եվրոպայի խորհրդի մի շարք կոնվենցիաներ, բանաձևեր, որոնք միջազգային մարդասիրական իրավունքի հետ մեկտեղ՝ ապահովում են օրենսդրական պաշտպանության լայն դաշտ:

Ադրբեջանի կողմից սանձազերծված 2020 թվականի պատերազմը, հումանիտար կորուստներից և աշխարհաքաղաքական հետևանքներից զատ, բացասական խորը ազդեցություն ունեցավ մշակութային ժառանգության վրա: Խախտելով միջազգային մարդասիրական իրավունքի մի շարք նորմեր՝ Ադրբեջանը բազմաթիվ հարվածներ է հասցրել ժառանգությանը թե՛ 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ռազմական գործողությունների ընթացքում¹ և թե՛ նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրի ստորագրումից հետո²: Ժառանգության հանդեպ անհանդուրժողականության դրսևորումները և արցախահայության մշակույթի իրավունքի սահմանափակումները չեն դադարել նաև Լաչինի իննամսյա շրջափակման և 2023 թվականին Արցախի ամբողջական հայաթափման ընթացքում և դրանից հետո: Շարունակվող հակամարտությունը Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական տարածքներում վտանգել է 4000-ից ավել մշակութային արժեքների՝ եկեղեցիների, վանքերի, խաչքարե-

¹ 2020 թվականի հոկտեմբերի 8-ին պատերազմի ռազմական գործողությունների ընթացքում միջազգային օրենքների խախտումներով Ադրբեջանը կրկնակի հարված հասցրեց Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցուն, հետո պայթեցրեց Կանաչ ժամ՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու գմբեթը, հարվածեց Շուշիի մշակույթի տանը, Ստեփանակերտի երաժշտական դպրոցը, թիրախավորեց Տիգրանակերտի հնագիտական ճամբարը և այլ արժեքներ:

² Արցախի մշակութային ժառանգության ոչնչացման ակնհայտ դեպքերից են Մեխակավանի Չորավոր Սբ Աստվածածին, Մոխրենիսի Սուրբ Սարգիս, Շուշիի Կանաչ ժամի՝ Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցիների հիմնահատակ ավերումները: Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցու թիրախավորումը, գմբեթի ավերումը և շարունակվող վնասը՝ այդ թվում եկեղեցու վերականգնման քողի տակ արձանագրությունների մաքրումը: Ոչնչացվել են Շուշիի Մեղրեցոց Սբ Աստվածածին եկեղեցու պատմական շերտերը, Ծարի Սուրբ Սարգիս և Սուրբ Գրիգոր միջնադարյան եկեղեցիների եզակի արձանագրությունները, Հաղրութի շրջանի Առաքել գյուղի խաչքարը, Շուշիի հայ-հունական հին գերեզմանոցի 12-13-րդ դարերի խաչքարերը: Ավերվել են նաև Արցախի Հաղրութի շրջանի Ուխտաձորի, Որոտանի, Կաքավավանքի Արցախյան ազատամարտին նվիրված խաչքարերը: Արդեն 2024 թվականին Մարտակերտում ոչնչացվել է Սիմոնի աղբյուր հուշարձան-խաչքարը, Քաշաթաղի Աղանուս գյուղի աղբյուր-հուշարձանին կից երկու խաչքարերը: Ոչնչացվել են պատմական գերեզմանոցներ Շուշիում, Սղնախում, Ծոշ համայնքում, Հաղրութում: Ոչնչացվել են արցախյան ազատամարտին նվիրված հերոսների հուշաքարեր և հուշարձաններ, այդ թվում՝ Հաղրութի ազատամարտիկների, ինչպես նաև Շուշիի Հայոց ցեղասպանության, Արցախյան ազատամարտի և Հայրենական պատերազմի զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրները, Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի «Վերածնված Թալիշ» հուշարձանը, Հովհաննես (Բվան) Թևոսյանի կիսանդրին, Վազգեն Սարգսյանի արձանը, Ալեքսանդր Մյասնիկյանի արձանը, Արցախի հերոս Աշոտ Ղուլյանի հուշաքարը, Ստեփան Ծահուվյանի բրոնզաձույլ արձանը, Անատոլի Չինևիչի կիսանդրին, Ծառլ Ազնավուրի արձանը և այլն (Տե՛ս Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում կայք, Ահազանգեր):

րի, ամբողջների, վաղբրիստոնեական բնակավայրերի հետագա պահպանումը՝ ոչ միայն ոչնչացման ու վանդալիզմի, այլև **ռազմական նպատակով օգտագործման** պատճառով: Ադրբեջանի կողմից կիրառվող՝ ժառանգության վնասման այս ուղղությունը ներառում է Արցախի եկեղեցիների, համայնքային կրթական և մշակութային կենտրոններում ռազմական տեխնիկայի տեղակայումը, զենք/զինամթերքի պահեստավորումը, այն մարտական հենակետի կամ հրամանատարության կենտրոնի վերածումը, նաև՝ զինվորականների ապաստարան դարձնելը և այլն:

Ու թեև Ադրբեջանը, հանդիսանալով 1954 թ. Հաագայի կոնվենցիայի և երկու լրացուցիչ արձանագրությունների մասնակից պետություն, և նաև պարտավորված լինելով Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերով՝ զինված հակամարտությունների ժամանակ պետք է չթիրախավորեր մշակութային արժեքները և չօգտագործեր դրանք ռազմական առավելություն ունենալու նպատակով, մենք ակնատես ենք մի իրականության, երբ միջազգային նորմերը ոչ միայն չեն պահպանվում, այլև անպատժելիության մթնոլորտում շարունակվում են անտեսվել՝ պատճառ դառնալով Արցախի եզակի արժեքների շարունակական կորստին:

Միջազգային մարդասիրական իրավունքը և Արցախի մշակութային ժառանգությունը

Չարկ է նշել, որ Արցախի մշակութային ժառանգության պաշտպանության խնդիրները՝ Միջազգային հումանիտար իրավունքի շրջանակներում ներկայացնելը ունի մի քանի հիմնավոր պատճառներ, որոնք կապված են Արցախի առանձնահատուկ աշխարհաքաղաքական բնույթի և ՄԱԿ-ի կողմից միջազգայնորեն որպես ազգային պետություն ճանաչված չլինելու խնդրի հետ: Ի մասնավորի, զինված բախումների ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության միջազգային գործող կոնվենցիաների ու պայմանագրերի անդամ են թե՛ Հայաստանը և թե՛ Ադրբեջանը, իսկ Արցախի Հանրապետությունը՝ ոչ [26, 2-րդ հոդված]³: Ուստի, նման իրավիճակներում մշակութային ժառանգությունը պատերազմական իրավիճակներում կարող է պաշտպանել Միջազգային մարդասիրական իրավունքը, որի շատ նորմեր՝ դառնալով սովորության սկզբունքներ և գործելով առանց նախապայմանների և տարածքային ու կենվենցիոնալ սահմանափակումների՝ ժառանգության լիարժեք պաշտպանության դրույթներ են առաջարկում Արցախի դեպքում՝ հաշվի առնելով թե միջազգայնորեն ճանաչված չլինելը և թե տարբեր կոնվենցիաներին անդամակցելու անհնարինությունը: Ուստի՝ Արցախում մշակութային արժեքները բոլոր իրավիճակներում կարող են իրավականորեն

³ «Կոնվենցիան կկիրառվի հայտարարված պատերազմի և ցանկացած այլ զինված ընդհարման դեպքում, որը ծագում է երկու կամ մի քանի Բարձր պայմանավորվող կողմերի միջև, անգամ եթե դրանցից մեկը չի ընդունում պատերազմական վիճակը: ... Եթե ընդհարման մեջ գտնվող տերություններից մեկը չի հանդիսանում սույն Կոնվենցիայի մասնակից, Կոնվենցիայի մասնակից տերություններն իրենց փոխհարաբերություններում, այնուամենայնիվ, կմնան նրանով կապված»: Այս համատեքստում սովորության նորմերն էլ Ժնևի և Հաագայի կոնվենցիաների հիմքով են գործում, ուստիև կոնվենցիոնալ դրույթները տարածվում են նաև սովորության սկզբունքների վրա: Այսինքն՝ եթե նույնիսկ Արցախը կոնվենցիայի կողմ չէ, այնուամենայնիվ, Ադրբեջանը պարտավոր է պահել դրա նորմերը:

պաշտպանված լինել: Քանզի եթե նույնիսկ պետությունը չի անդամակցում զինված հակամարտության ժամանակ մշակութային արժեքների պաշտպանությունը կարգավորող Հաագայի և Տննի կամ այլ պայմանագրի, նա շարունակում է մնալ պարտավորված միջազգային մարդասիրական իրավունքի կանոններով, որոնք մշակվել են ժամանակի ընթացքում **որպես ընդհանուր պրակտիկա և ամրագրվել միջազգային մարդասիրական սովորության օրենքներում, որոնք կիրառելիությունը չի կարող վիճարկվել ոչ մի պետության կողմից ոչ մի իրավիճակում** [16, pp. 15-19]: Միջազգային մարդասիրական իրավունքը հաճախ անվանվում է նաև պատերազմի իրավունք («jus in bello»): Մա միջազգային իրավունքի այն ճյուղն է, որ ձգտում է սահմանափակելու զինված ընդհարման ազդեցությունը՝ պաշտպանելով նրանց, ովքեր չեն մասնակցում ռազմական գործողություններին, բայց տուժում են իրենց իրավունքների ոտնահարումից: Այն ներառում է իրավունքի երկու ճյուղ՝ Հաագայի և Տննի իրավունքները՝ արտացոլելով 1954 թ. Հաագայի կոնվենցիայում և դրա երկու արձանագրություններում սահմանված կանոնները, ինչպես նաև Տննի 1949 թ. կոնվենցիան՝ իր երկու արձանագրություններով: Միջազգային մարդասիրական իրավունքի հիմքն են նաև ՅՈՒՆԵՍԿՕ-ի 1970 թ. «Մշակութային արժեքների ապօրինի ներմուծման, արտահանման և սեփականության իրավունքի փոխանցման միջոցների արգելման և կանխարգելման մասին» և 1972 թ. «Համաշխարհային ժառանգության կոնվենցիան»՝ նպատակ ունենալով պաշտպանել համաշխարհային ժառանգության օբյեկտները, ներառյալ հակամարտությունների գոտիներում գտնվողները:

Փաստորեն, Միջազգային մարդասիրական իրավունքը զինված հակամարտությունների ժամանակ մշակութային արժեքների պաշտպանության ամուր շրջանակ է ապահովում՝ հիմնված լինելով տարբեր միջազգային պայմանագրերի, կոնվենցիաների և միջազգային իրավունքի սովորության սկզբունքների վրա, որոնք միասին ձգտում են մեղմել պատերազմի ազդեցությունը մշակութային ժառանգության վրա: Պետք է շեշտել, որ միջազգային մարդասիրական իրավունքի կանոնները պարտադրում են պաշտպանել մշակութային արժեքները հակամարտության երկու կողմերին էլ, այսինքն՝ ինչպես մշակութային արժեքը վերահսկող, այնպես էլ հակառակ կողմին. և՛ պետություններին (միջազգային բախումների կողմեր), և՛ ոչ միջազգային բախումների մասնակից կողմերին՝ էթնիկ խմբերին [7]:

Սա նշանակում է, որ Հաագայի և Տննի կոնվենցիաների ամենակարևոր դրույթները՝ որպես իրավական գերակա հիմքով համընդհանուր ճշմարտություն, ներառված են միջազգային հումանիտար իրավունքի սովորության դարձած օրենքներում և ընդհանրացված կերպով ներկայացվում են միջազգային իրավունքի բոլոր սուբյեկտներին: Միջազգային մարդասիրական իրավունքն ուղղված է պետությունների միջև բռնության գործադրումը փոխհամաձայնեցված որոշակի նորմերի ենթարկելուն[7], որից անմասն չէ մշակույթի իրավունքը՝ որպես մարդու հիմնարար (ֆունդամենտալ) իրավունք: Ամենաէականն այստեղ այն է, որ անկախ այն բանից՝ այդ իրավունքով շարժական կամ անշարժ ժառանգությունն է պաշտպանվում, թե քաղաքացիական բնակչությունը, այն չի ընձեռում պետություններին որևէ իրավունք՝ ի վնաս անհատի կամ համայնքի: Դրանով

պաշտպանվում են միջազգային իրավունքում մարդու անձը, նրա իրավունքները՝ ներառյալ մշակույթի իրավունքը [29, էջեր 262-263]: Միջազգային մարդասիրական իրավունքի շրջանակներում մշակութային ժառանգությունը համարվում է մարդու ստեղծագործ մտքի բացառիկ արտահայտություն, որի ոչնչացումը կամ վնասումը ուղղակիորեն խախտում է մարդու/համայնքի անդամների մշակութային իրավունքները թե՛ պատերազմի ժամանակ և թե՛ դրանից հետո:

Հույժ կարևոր է ընդգծել այն հանգամանքը, որ Արդարադատության միջազգային դատարանը հաստատել է, որ պատերազմի ժամանակ և բռնազավթված տարածքներում գործող օրենքները [5, § 172]՝ ներառյալ մշակութային արժեքների պաշտպանության դրույթները, ձեռք են բերել միջազգային սովորութային իրավունքի (*infra Jurisprudence*) կարգավիճակ, այսինքն՝ գործում են որպես համընդհանուր և անշրջանցելի կանոն ու պարտադիր են բոլոր պետությունների համար. «Դատարանը գտնում է, որ Հաագայի կանոնակարգի դրույթները դարձել են սովորութային իրավունքի մաս» [6, § 89]: Մշակութային իրավունքը հարգելը պարտավորություն է [17, pp. 40-54], կիրառելի որպես «*lex specialis*», և գործում է որպես սովորութային իրավունք: [23, p.11;4, pp.127-132, կանոն 38-39]: Չնայած բազմաթիվ կարգավորումներին՝ միջազգային մարդասիրական իրավունքը շարունակում է բախվել բարդ մարտահրավերների, ինչի մասին վկայում են վերջին իրադարձությունները, քանզի շատ պետություններ, այդ թվում՝ Ադրբեջանը, բազմաթիվ դեպքերում ժխտում և չեն կատարում իրենց պարտավորությունները, դիցուք՝ մշակութային արժեքների հանդեպ հարգանքի, դրանց ոչնչացումից զերծ մնալու և ռազմական նպատակներով դրանց չօգտագործման առնչությամբ: Համաձայն օկուպացիոն օրենքի՝ տարածքի ինքնիշխանության իրավունքն օկուպացումից հետո չի անցնում օկուպանտին, որը, հետևաբար, պետք է հնարավորինս պահպանի նախկին ստատուս քվոն: Այսինքն՝ բռնազավթող տերությունը պետք է հնարավորինս հարգի բռնազավթված տարածքում գործող օրենքներն ու ինստիտուտները:

Մշակութային ժառանգության՝ ռազմական նպատակով օգտագործման միջազգային արգելքները

Ըստ «Զինված ընդհարման դեպքում մշակութային արժեքների պաշտպանության մասին» Հաագայի 1954 թ. կոնվենցիայի և դրան լրացնող 1954թ. և 1999թ. արձանագրությունների՝ արգելվում է կոնվենցիայով սահմանված մշակութային արժեքն [20, art. 1.a] օգտագործել ռազմական նպատակներով [19, p. 157]: Ըստ Հաագայի 1954 թվականի կոնվենցիայի 9-րդ հոդվածի՝ անթույլատրելի է թե՛ ռազմական մարտական դիրքի տեղակայումը քաղաքացիական ենթակառուցվածքներին մոտ տարածքներում, թե՛ մշակութային արժեքների, բարեգործությանը նվիրված կառույցների, կրթական կենտրոնների, դպրոցների և հիվանդանոցների օգտագործումը ռազմական նպատակով (ապաստարան, զինապահեստ, զինված խմբի կեցավայր), քանզի էապես կարող է վնասել ժառանգության անձեռնմխելիությանը [20, art. 9]: Իսկ Հաագայի 1999 թ. երկրորդ արձանագրության 6-րդ հոդվածն արգելում է մշակութային արժեքները վերածել ռազմական օբյեկտների կամ օգտագործել այնպիսի նպատակներով, որոնք կարող են դրանք ավերվելու կամ վնասվելու վտանգի ենթարկել: Իսկ հիշյալ արձանագրության 15-րդ հոդվա-

ծի գ) և դ) կետերով այդպիսի գործողությունը որակվում է որպես ռազմական հանցագործություն: Հարկ է նշել, որ ռազմական նպատակով հուշարձանների օգտագործման դեպքում հուշարձանը՝ ներառյալ եկեղեցին, կրթական կենտրոնը, թանգարանը կամ այլ շինություն, կորցնում է պատերազմական իրավիճակներում Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածով [20, art. 4] (և այլ կանոնակարգերով) իրեն տրամադրված պաշտպանությունից: Այսինքն՝ չեզոքանում է պատերազմական իրավիճակներում ժառանգության ունեցած անձեռնմխելիությունը և կամա թե ակամա նա վերածվում է «ռազմական օբյեկտ»-ի, որի թիրախավորումը պատերազմների ժամանակ արգելված չէ ռազմական առավելություն ստանալու համար: Այստեղ հիմնավոր հարց է առաջանում, թե ի՞նչ է ռազմական նպատակը, և ո՞րն է ռազմական նպատակով հուշարձանի օգտագործումը:

Ռազմական նպատակով հուշարձանի օգտագործումը

Ռազմական նպատակներով հուշարձանների օգտագործում նշանակում է մշակութային արժեքի օգտագործում այնպիսի եղանակներով, որոնք ծառայում են զինված հակամարտությունների ժամանակ ռազմական առավելություն ստանալու նպատակներին, որը կարող է ունենալ մի քանի ձև.

1. *Մշակութային ժառանգության օգտագործումը որպես ապաստարան.* Ռազմական գործողությունների ժամանակ հուշարձանները և ժառանգության վայրերը զինվորների կամ քաղաքացիական անձանց համար հաճախ օգտագործվում են որպես ապաստարաններ, որոնք թեև կարող են անվտանգ ընկալվել՝ ելնելով իրենց մշակութային նշանակությունից, բայց միևնույն ժամանակ նման օգտագործումը խոցելի է դարձնում հենց ժառանգությունը և մեծացնում հակառակորդի կողմից թիրախավորման հավանականությունը:

2. *Ժառանգության տարածքում կամ անմիջական շրջակայքում զինամթերքի պահպանում.* նրանում կամ տարածքում զենք պահելը մեծ վտանգ է տվյալ հուշարձանի պահպանության համար, քանզի եղած ռազմամթերքի չեզոքացումը կարող է տալ հակառակորդին ռազմական առավելություն և հրամայական անհրաժեշտություն լինել որոշ իրավիճակներում:

3. *Ժառանգության օգտագործումը որպես դիտակետ, հրամանատարական կենտրոն:* Շատ հաճախ, կախված ժառանգության բնույթից ու դիրքից (բարձր աշտարակ, պատմական ամրոց) այն կարող է մարտավարական առավելություններ տալ և ռազմական գործողությունների ժամանակ ծառայել որպես դիտակետ՝ դիպուկահարների համար՝ իր բանակին տալով ռազմական առավելություն: Բացի դրանից՝ այն ուղիղ կերպով նույնպես կարող է վնասել ժառանգությանը՝ թե՛ պատասխան դիտավորյալ հարվածներից, թե՛ պայթեցման և թե՛ պատահական հարվածներից:

Ադրբեջանի կողմից Արցախի հուշարձանների ռազմական նպատակով օգտագործումը

2020 թվականի 44-օրյա պատերազմի ավարտից հետո բռնազավթված Հաղրուբում Կատարո եկեղեցին ադրբեջանական զինված ուժերը վերածել են զինվորական ապաստարանի, որտեղ պահվում է զենք-զինամթերք[28]: Ադրբեջանի կողմից ռազմական նպատակներով է օգտագործվել նաև Տոդից Վարանդա (Ֆիզուլի) տանող ճանապարհից

ձախ՝ հարթավայրից առանձնացող մի բլրի վրա գտնվող Կաթավաճախի եկեղեցին: Այստեղ 2020 թվականի հոկտեմբերին ընթացող ինտենսիվ մարտերի արդյունքում տարածքը ենթարկվել է հրետակոծության: Ադրբեջանցի զինվորականները եկեղեցին օգտագործել են որպես ռազմական հենակետ, ինչի հետևանքով կառույցի զարդաքանդակներն ու հայերեն արձանագրությունները զգալիորեն տուժել կամ և ոչնչացվել են [27]:

Հեռուստատեսությամբ հեռարձակվող պաշտոնական տեսանյութերում ադրբեջանական կողմը թեև ցույց էր տալիս, որ զինված ուժերը տեղակայվում էին Արցախի պաշտպանության բանակի նախկին գործառնություն, սակայն ադրբեջանական սոցիալական ցանցերի դիտարկումը, հատկապես 2023 թվականի Արցախի ամբողջապես բռնազավթումից հետո, թույլ է տալիս եզրակացնել, որ Արցախի մի շարք բնակավայրերում գտնվող և նախքան 2020 թվականը կառուցված և հիմնանորոգված որոշ դպրոցների և հատկապես համայնքային մշակութային կենտրոնների շենքեր օգտագործվել են որպես ոստիկանական, զինվորական հենակետեր և կենտրոնատեղիներ: Ի մասնավոր՝ 2023 թվականի սեպտեմբերյան ռազմական գործողություններից հետո, երբ Արցախի պաշտպանության բանակի զինտեխնիկայի ու զինամթերքի մի մասը տեղակայվեց Շուշի քաղաքի Խ. Աբովյանի անվան դպրոցի բակում, որը, դատելով լուսանկարներից և տեսանյութերից, դարձել էր ադրբեջանական բանակի կառավարման կետերից մեկը Շուշիում [24]: Ռազմական նպատակների են ծառայեցվել Մարտակերտի շրջանի Գետավան գյուղի համայնքային կենտրոնի, շրջանի Չափար գյուղի դպրոցի շենքերը: Ռազմական կետերի են վերածվել Մառնաղբյուր, Ուխտաձոր գյուղերի համայնքային կենտրոնների շենքերը: 2023 թվականին համայնքային կենտրոնի շենքն արդեն լքված էր, պատուհանները ջարդված [25]:

Մշակութային արժեքների ռազմական նպատակով օգտագործման միջազգային արգելքը

Միջազգային մարդասիրական օրենքի 38-րդ կանոնը պահանջում է, որ հակամարտության կողմերը հարգեն մշակութային արժեքը և զերծ մնան կրոնից, արվեստից, գիտությանը, կրթությանը կամ բարեգործական նպատակներից նվիրված կառույցների և պատմական հուշարձանների անհարկի ոչնչացումից, եթե **«դրանք ռազմական թիրախներ չեն»**: Կանոնը հավելում է, որ յուրաքանչյուր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող ժառանգությունը (ինչպես այն սահմանված է Հասագայի կոնվենցիայի 1-ին հոդվածով) չպետք է հարձակման թիրախ դառնա, եթե դա հրամայականորեն չի պահանջում ռազմական անհրաժեշտությունը: Այսինքն, եթե եկեղեցում կան զինվորականներ, կամ պահված է զենք-զինամթերք, ապա դրա ոչնչացումը հակառակորդին կարող է տալ ռազմական առավելություն, և եթե այդ առավելությունը կոնկրետ ու որոշակի է, ապա հիշյալ կանոնում կիրառված «եթե»-ն չեզոքանում է, և «օրինական» է դառնում ժառանգության վրա հարձակումը: Այսինքն՝ **հուշարձանների ռազմական նպատակով օգտագործումը պատերազմի ժամանակ հուշարձանի վրա հակառակորդի հարձակումը կարող է օրինականացնել** [19, pp. 67-71]: Նույն տրամաբանությամբ Միջազգային մարդասիրական իրավունքի 39-րդ կանոնը հավելում է, որ արգելվում է ցանկացած ժողովրդի մշակութային ժառանգության **օգտագործումը** այնպիսի նպատակներով, որոնք,

հնարավոր է, որ այն հասցնեն ոչնչացման կամ վնասն այն, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է ռազմական անհրաժեշտությունից [10, rule 39]: Եվ նույն տրամաբանությամբ հիշյալ օրենքի 39-րդ կանոնը հավելում է, որ արգելվում է ցանկացած ժողովրդի մշակութային ժառանգության օգտագործումը այնպիսի նպատակներով, որոնք կարող են ոչնչացնել կամ վնասել այն, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է ռազմական անհրաժեշտությունից [10, Rule 39]: Վերջապես, 40-րդ կանոնն ամբողջացնում է ասվածը՝ նշելով, որ հակամարտության յուրաքանչյուր կողմ պետք է պաշտպանի մշակութային ժառանգությունը. «Յուրաքանչյուր ժողովրդի համար մեծ նշանակություն ունեցող մշակութային ժառանգության գոյության, կողոպուտի կամ յուրացման և վանդալիզմի ցանկացած գործողություն արգելվում է» [11, Rule 40]: Ավելին, Միջազգային մարդասիրական իրավունքի 41-րդ կանոնը սահմանում է, որ «Գրավող պետությունը պետք է կանխի բռնազավթված տարածքից մշակութային արժեքների ապօրինի դուրսբերումը և ապօրինաբար դուրս բերված գույքը վերադարձնի բռնազավթված տարածքի իրավասու մարմիններին» [12, Rule 41]: Հիշյալ կանոնների դիտարկումից պարզ է դառնում, որ ռազմական գործողությունների ընթացքում մշակութային արժեքների պաշտպանությունն առաջին հերթին այն ռազմական նպատակներով չօգտագործելն է: Ինչու՞, քանզի դրանք կարող են թուլացնել ժառանգության անձեռնմխելիությունը բախումների ընթացքում և դրդել հակառակորդին հարձակման:

Այստեղ, «**ռազմական անհրաժեշտություն**» տերմինն ունի լրացուցիչ պարզաբանման կարիք, քանզի այն սկզբունքն է, որը թուլացնում է պատերազմի ժամանակ մշակութային ժառանգության պաշտպանության ընդհանուր իրավական համակարգը: Ռազմական անհրաժեշտության սկզբունքը միջազգային հումանիտար իրավունքի տիրույթում է հայտնվել՝ հիմքում ունենալով Հաագայի 1954 թ. և Ժնևի 1949 թ. կոնվենցիոնալ դրույթները: Դրանցից ամենակարևորներից մեկն ամրագրված է Հաագայի կոնվենցիայի 4-րդ հոդվածում. «Պետությունները պարտավոր են հարգել թե՛ իրենց սեփական և թե՛ այլ կողմի տարածքում գտնվող մշակութային արժեքները՝ զերծ մնալով թշնամանքի գործողություններից, **բացառությամբ այն դեպքերի, երբ ռազմական անհրաժեշտությունը հրամայականորեն պահանջում է նման որոշում**» [20, article 4]: Այսինքն՝ ըստ կոնվենցիայի 4-րդ հոդվածի 2-րդ մասի՝ **մշակութային արժեքների պաշտպանության պարտավորությունից բացառություն է այն դեպքը, երբ դրա ոչնչացումը կարող է ռազմական անհրաժեշտություն լինել**: Փաստական համատեքստի վերլուծությունն ակներև է դարձնում մի ճշմարտություն, որ **մշակութային ժառանգությունը, քանի դեռ ռազմական նպատակի չի առնչվում կամ չի օգտագործվում ռազմական նպատակով, լիարժեք պաշտպանված է, իսկ երբ ծառայում է ռազմական որևէ նպատակի, ապա պաշտպանությունը խիստ խնդրահարույց է**:

Այս գիտակցմամբ փորձենք տալ տերմինի հիմնավոր բացատրությունը: Մշակութային ժառանգության պաշտպանության համատեքստում ռազմական անհրաժեշտության սկզբունքը ոչ թե նոր է, որը պետք է բացարձակորեն պաշտպանի մշակութային ժառանգությունը, այլ 20-րդ դարի համատարած ոչնչացումների ֆոնին պարզապես մեղմի և սահմանափակի ռազմատենչ պատերազմներ վարելու սովորույթը: Այն սահ-

մանավակում է պետությունների ազատությունը զինված բախումների ընթացքում և դնում ռազմական նպատակին հասնելու օրինականության հարցը: Այլոքեն, ռազմական անհրաժեշտությունը միջազգային մարդասիրական իրավունքի հայեցակարգ է, որը ձգտում է հավասարակշռել արդյունավետ ռազմական գործողությունների պահանջները մշակութային արժեքների պաշտպանության հրամայականի հետ՝ թույլ տալով ուժի կիրառումը և որոշակի միջոցների ձեռնարկումը, որոնք էական են օրինական ռազմական նպատակին հասնելու համար կամ արգելված չեն միջազգային իրավունքով [19, pp. 62-67]:

Այս սկզբունքը մշտապես առկա է եղել պատերազմի ժամանակ ժառանգության պաշտպանության բոլոր օրենքներում՝ ներառյալ Մանկտ Պետերբուրգի 1868 թ. հռչակագրում և Լիբերի օրենսգրքում, համաձայն որի՝ մշակութային ժառանգության դեմ օրինական է միայն այնպիսի ռազմական ուժը, որն անհրաժեշտ է, որ պատերազմող կողմերը հասնեն իրենց ռազմական նպատակին [2, p. 213; 15, p. 197]: Հարկ է նշել, որ «Ցամաքում պատերազմի օրենքների և սովորույթների հարգման մասին» Հաագայի 1907թ. կանոնակարգի համաձայն՝ թշնամու ժառանգության ոչնչացումը կամ զավթումն օրինական է, եթե հրամայականորեն բխում է պատերազմի ռազմական գործողությունների անհրաժեշտությունից [8, Regulations: Art. 27]: Հաագայի 1907 թ. Կոնվենցիայի 23-րդ հոդվածի 7-րդ կետը ռազմական անհրաժեշտությունը սահմանում է որպես այն ամենը, ինչն անհրաժեշտ է պատերազմի կամ պաշտպանության համար մարտի ընթացքում կամ դրան նախապատրաստվելիս [8, 23 (g)]: Վերոհիշյալ կանոնակարգի 27-րդ հոդվածն արդեն ամրագրում է, որ «...արգելվում է թիրախավորել մշակութային արժեքները, եթե դրանք չեն օգտագործվել ռազմական նպատակներով» [8, Regulations: Art. 27]: Ասվածի տրամաբանական հաստատումն է այն, որ հենց **մշակութային արժեքների «օգտագործումն» է ոչ մշակութային նպատակներով, որ ստիպում է դրանց կորցնել լրացուցիչ պաշտպանությունը և վերածվել ռազմական նպատակ հետապնդող թիրախի: Հույժ կարևոր է արձանագրել, որ ռազմական անհրաժեշտությունը, առաջ գալով որպես մշակութային արժեքների վնասման դեմ պայքարի սահմանափակող ուժ, այնուհետև դարձավ թույլատրելի բացառություն** [13, pp. 1268-1271]:

1977 թ. ընդունված՝ Ժնևի 1949 թ. օգոստոսի 12-ի կոնվենցիային կից առաջին արձանագրությունը մշակութային արժեքների պաշտպանությունը մոտեցրեց քաղաքացիական օբյեկտների պաշտպանությանը և նշեց, որ դրանք չպետք է հարձակման ենթարկվեն՝ կրկին բացառությամբ ռազմական անհրաժեշտության դեպքերի [3]: Այդ արձանագրության 52-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված ռազմական նպատակը պարունակում է երկու էական չափանիշ, որոնք պետք է լիարժեքորեն կատարվեն նախքան ժառանգության օբյեկտների ոչնչացումը, վնասումը կամ գրավումը [4, p. 33]: Առաջինն այն է, որ հարձակումները պետք է սահմանափակվեն միայն ռազմական օբյեկտներով, և հարձակման դեպքում օբյեկտի բնույթը, գտնվելու վայրը, նշանակությունը կամ օգտագործումը պետք է լինեն այնպիսին, որ այն **«արդյունավետ ներդրում ունենան ռազմական գործողություններում»** [4, p. 34]: Իսկ երկրորդն այն է, որ **ռազմական առավելությունը պետք է լինի բացահայտ և որոշակի** [3]: Այստեղ ակնհայտ է, որ ժառան-

գոյությունն իր բնույթով, գտնվելու վայրով և նշանակությամբ չի կարող արդյունավետ ներդրում ունենալ ռազմական գործողություններում, բայց սհա դրա օգտագործումը կարող է վտանգել այն: Բայց այստեղ կա ռազմական առավելության հասնելու բացահայտ և որոշակի լինելու փաստը: Ուստի «**չի թույլատրվում ոչնչացնել այնպիսի մշակութային օբյեկտներ, որի օգտագործումը որևէ կոնկրետ և բացահայտ ներդրում չի բերում ռազմական գործողություններում, ոչ էլ այն մշակութային օբյեկտը, որը ժամանակավորապես ծառայել է որպես մարտիկների ապաստարան, բայց այլևս որպես այդպիսին չի օգտագործվում**» [1, p.334, § 2.6]: Միայն տվյալ պահին մշակութային կառույցի ռազմական նպատակով օգտագործումն է՝, որ կարող է մշակութային կառույցը «դարձնել» ռազմական թիրախ: Այլ կերպ ասած՝ ռազմական գործողություններին օժանդակելու համար ժառանգության օգտագործումը հիմնական փաստարկն է, որ զինված հակամարտության կողմերից մեկը կարող է վկայակոչել մշակութային արժեքների վրա հարձակումն արդարացնելու համար [14, pp. 1-91]: Այստեղից կրկին կարող ենք հետևություն անել, որ մշակութային արժեքների օգտագործումն իբրև ապաստարան, զենք-զինամթերքի պահեստ, թուլացնում է ժառանգության պաշտպանության ընդհանուր համակարգը և դարձնում թիրախավորման համար խոցելի:

1999 թվականին ընդունված Հաագայի 1954 թ. կոնվենցիայի երկրորդ արձանագրությունը նշում է՝ «**Ռազմական նպատակ հետապնդող թիրախը՝ այն օբյեկտն է, որն իր բնույթով, գտնվելու վայրով, նշանակությամբ կամ օգտագործմամբ արդյունավետ ներդրում է ունենում ռազմական գործողություններում, և որի լրիվ կամ մասնակի ոչնչացումը, գրավումը կամ չեզոքացումը տվյալ պահին տիրող հանգամանքներում տալիս են հստակ/բացահայտ ռազմական առավելություն**» [22, art. 1 f.]: Արձանագրությունը նշում է, որ մշակութային արժեքների դեմ թշնամանքի գործողությունն օրինական է, եթե բավարարվում է երկու պահանջի. 1. «մշակութային արժեքն իր գործառնությունով վերածվել է ռազմական նպատակներ հետապնդող թիրախի», 2. «համանման ռազմական առավելություն ստանալու համար իրագործելի այլընտրանք չկա» [22, art. 6]:

Երկրորդ արձանագրությունը փորձում է խստացնել պայմանները և ավելացնում, որ հարձակումը պետք է պատվիրվի հրամանատարության ամենաբարձր օպերատիվ մակարդակում, սպայի կողմից, որը ղեկավարում է գումարտակին համարժեք կամ ավելի մեծ ուժ, և որ այն կարող է հարձակման ենթարկվել «անհապաղ ինքնապաշտպանության պահանջների պատճառով» [22, art. 13(2)(c)]: Բացի այդ, Երկրորդ արձանագրությունը հարձակման հետագա պայման է ավելացնում. հարձակման դեպքում պետք է տրվի **նախազգուշացում, երբ հանգամանքները թույլ են տալիս**: 1954 թ.-ի կոնվենցիայով այդ պարտականությունը գոյություն չի ունեցել: Բացի այդ, երբ հակառա-

⁴ Գոյություն ունեն տարբեր եղանակներ, որ հակառակորդը կարող է օգտագործել մշակութային արժեքները ռազմական գործողությունների ընթացքում: Ամենաակնհայտը անշարժ մշակութային ժառանգության մեջ դիրք գրավելն է, օրինակ՝ բլրի զագաթի պատմական ամրոցը որպես պաշտպանական ամրոց օգտագործելը կամ միջնադարյան զանգակատանը կամ մինարեթում դիպուկահարի տեղակայումը՝ մարտադաշտը հետախուզելու նպատակով: Մեկ այլ դեպքում կարող են ռազմական սարքավորումներ կամ զինամթերք պահվել թանգարանում, պատկերասրահում կամ պատմական նշանակություն ունեցող տանը:

կորոշր պարզում է, որ մշակութային կառույցը օգտագործվում է ռազմական նպատակով, պետք է որջամիտ ժամանակ տա զինվորներին կամ հրամանատարներին իրավիճակը փոխելու համար: Այսինքն՝ վերոշարադրյալ որոշ դիտարկումներ ակներև են դարձնում այն փաստը, որ «ռազմական անհրաժեշտությունը» չի կարող տալ մշակութային ժառանգությունը վնասելու կամ ոչնչացնելու համար անսահմանափակ ուժ կիրառելու իրավունք [18, p. 1].

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ. Զինված բախումների դեպքում կամ կոնֆլիկտային իրավիճակներում հուշարձանների կամ դրանց անմիջական մշակութային լանդշաֆտի օգտագործումը ռազմական նպատակով՝ այդ թվում որպես սպաստարան, զենք-զինամթերքի պահեստ, մարտական հենակետ, դիտակետ, հրամանատարության կետ կամ զինված ուժերի տեղակայման կենտրոն, էական վտանգ է հանդիսանում ժառանգության պահպանությանը: Հաագայի 1954 թվականի կոնվենցիայի և դրա երկու արձանագրությունների, Ժնևի կոնվենցիաների և լրացուցիչ արձանագրությունների և դրանց հիմքով ձևավորված Միջազգային մարդասիրական իրավունքի նորմերն արգելում են ժառանգության օգտագործումը ռազմական նպատակներով: Բայց, սկսած 2020 թվականից, Ադրբեջանի կողմից Արցախի հայկական եկեղեցիների, համայնքային մշակութային ու կրթական կենտրոնների օգտագործումը ռազմական նպատակների համար հանգեցրել են այդ արժեքների անձեռնմխելիության կորուստին և վտանգել հետագա պահպանումը: Միջազգային փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվել է, որ շատ հաճախ պատերազմների ժամանակ ժառանգության պաշտպանությունը կախված է զինված ուժերի ճիշտ ու արդյունավետ գործողություններից և ժառանգությունը ռազմական թիրախ չդարձնելուց կամ ռազմական նպատակներին չծառայեցնելուց, իսկ ինչպես մենք տեսանք, Ադրբեջանի կողմից հայկական հուշարձանները ոչ միայն վտանգվում են դիտավորյալ հարձակումների պատճառով, այլև օգտագործվում ռազմական զանազան նպատակներով: Միջազգային նորմերի հարգումը հրամայական է Արցախի մշակութային արժեքների հետագա պահպանումը իրականացնելու համար:

Գ ր ա կ ա ն ու թ յ ու ն

1. **Bothe M., Partsch K. Waldemar A.** New Rules for Victims of Armed Conflicts, Commentary on the Two 1977 Protocols Additional to the Geneva Conventions of 1949, The Hague/Boston/London, Martinus Nijhoff Publishers, 1982.
2. **Carnahan B. M, Lincoln.** Lieber and the Laws of War: The Origins and Limits of the Principle of Military Necessity, “American Journal of International Law”, Vol. 92, 1998.
3. Geneva, Protocol Additional to the Geneva Conventions of 12 August 1949, and Relating to the Protection of Victims of International Armed Conflicts (Protocol I), <https://www.ohchr.org/en/instruments-mechanisms/instruments/protocol-additional-geneva-conventions-12-august-1949-and>.
4. **Henckaerts J.-M., Doswald-Beck L.,** Customary International Humanitarian Law, Volume I: Rules, Cambridge: Cambridge University Press, 2005, <https://www.icrc.org/en/doc/assets/files/other/customary-international-humanitarian-law-i-icrc-eng.pdf>.
5. ICJ/ Congo, Reports of Judgments, Advisory Opinions and Orders: Case Concerning Armed Activities on the Territory of the Congo (Democratic Republic of the Congo V. Uganda), Judgment of 19 December 2005, <https://www.icj-cij.org/public/files/case-related/116/116-20051219-JUD-01-00-EN.pdf>.

6. ICJ/Israel, Separation Wall/Security Fence in the Occupied Palestinian Territory, <https://casebook.icrc.org/case-study/icjisrael-separation-wallsecurity-fence-occupied-palestinian-territory>.
7. ICRC, Practical Advice for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict – Guidelines, Advisory Service On International Humanitarian Law, 2002, <https://www.icrc.org/en/document/practical-advice-protection-cultural-property-event-armed-conflict-guidelines>.
8. IHL, Convention (IV) respecting the Laws and Customs of War on Land and its annex: Regulations concerning the Laws and Customs of War on Land. The Hague, 18 October 1907, <https://ihl-databases.icrc.org/en/ihl-treaties/hague-conv-iv-1907>.
9. IHL, Practice Relating to Rule 38. Attacks against Cultural Property, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v2_cou_be_rule38.
10. IHL, Practice Relating to Rule 39. Use of Cultural Property for Military Purposes, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v2_rul_rule39.
11. IHL, Practice Relating to Rule 40. Respect for Cultural Property, https://ihl-databases.icrc.org/customary-ihl/eng/docs/v1_rul_rule40 (մուսք՝ 03.02.2022).
12. IHL, Practice Relating to Rule 41, Export and Return of Cultural Property in Occupied Territory, <https://ihl-databases.icrc.org/en/customary-ihl/v1/rule41>.
13. **Johannot-Gradis Ch.**, Protecting the Past for the Future: How does Law Protect Tangible and Intangible Cultural Heritage in Armed conflict? “International Review of the Red Cross”, 2015, № 97 (900) .
14. **O’Keefe R., Péron C., Musayev T., Ferrari G.** Protection of Cultural Property Military Manual, UNESCO, France, and the International Institute of Humanitarian Law, Sanremo, Italy, 2016.
15. **Robertson H. B., Jr.**, The Principle of a Military Objective in the Law of Armed Conflict, “International Law Studies”, Vol. 72, Newport, Rhode Island, 1998.
16. **Roethlisberger E.** The Importance of Respect for International Humanitarian Law and the Activities of the ICRC, “Protection of Cultural Property in the Event of Armed Conflict: Report on the Meeting of Experts (Geneva, 5-6 October 2000)”, ICRC, Geneva, February 2002, <https://www.icrc.org/en/document/protection-cultural-property-event-armed-conflict-report>:
17. **Stone P.** The Challenge of Protecting Heritage in Times of Armed Conflict, “Museum International”, Vol. 67, 2015.
18. **Techera E.** Protection of Cultural Heritage in Times of Armed Conflict: The International Legal Framework Revisited, 2007, University of Western Australia, https://www.researchgate.net/publication/228260427_Protection_of_Cultural_Heritage_in_Times_of_Armed_Conflict_The_International_Legal_Framework_Revisited.
19. **Tigranyan A.**, The Armenian Cultural Heritage of Artsakh, Mechanisms for Protection in The International System for Preservation of Heritage, “Vem Series” No 6, Yerevan, 2023, <https://orient-new.sci.am/archive/915/article-zc2EvGaysTPwBOUn9ktuMJir4Q1oxLZASgl6KpFX.pdf>.
20. UNESCO, Hague Convention for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict. The Hague, 14 May 1954.
21. UNESCO, Protect Cultural Property in the Event of Armed Conflict, The 1954 Hague Convention and Its Two Protocols, https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000138645?fbclid=IwAR3tiBiy25x1Xcnpjv6F8qPBpQxqO5nrRbtejD8Y1xl-eKw88NM6aK_2zvY.
22. UNESCO, Second Protocol to the Hague Convention of 1954 for the Protection of Cultural Property in the Event of Armed Conflict. The Hague, 26 March 1999.
23. United Nations Human Rights Office of the High Commissioner, International Legal Protection of Human Rights in Armed Conflict, New York and Geneva, 2011.
24. АЗЕРТАДЖ Новости, Военные атташе осмотрели конфискованную у армян военную технику и боеприпасы, <https://www.youtube.com/watch?v=pedhLD0aAoU>.
25. Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում Ադրբեջանն Արցախի մշակույթի տները, համայնքային կենտրոններն ու դպրոցներն օգտագործում է ռազմական նպատակով, 2024, <https://monumentwatch.org/hy/alerts/ադրբեջանն-արցախի-մշակույթի-տները-համ/> (դիտվել է՝ 15.03.2024):
26. **Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին»** Ժնևի 1949 թ. կոնվենցիա, <http://www.irtek.am/views/act.aspx?aid=50336>:

27. Կավաքավանքի եկեղեցին կորցնում է իր նախնական տեսքը, «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում», <https://monumentwatch.org/hy/alerts/wahaaqanq.-կավաքավանքի-եկեղեցին-կորցն/> (դիտվել է՝ 15.03.2024):
28. Կատարո վանքի եկեղեցու օգտագործումը ռազմական նպատակներով, «Արցախի մշակութային ժառանգության մշտադիտարկում», 13 ապրիլի 2021, <https://monumentwatch.org/hy/alerts/կատարո-վանքի-եկեղեցու-օգտագործումը-ը/> (դիտվել է՝ 21.06.2021):
29. **Քոչարյան Վ.** Միջազգային իրավունք: Ուսումնական ձեռնարկ, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 2002:

References

24. AZERTAC News, Military attaches inspect military equipment and ammunition confiscated from Armenians [AZERTADZH Novosti, Voyennyye attashe osmotreli konfiskovannuyu u armyan voyennuyu tekhniku i boyepripasy] (in Russian)
25. Monitoring of Artsakh's cultural heritage Azerbaijan uses Artsakh's culture houses, community centers and schools for military purposes, 2024 [*Arts'akhi mshakutayin zharrangutyayn mshtaditarkum Aderbejann Arts'akhi mshakutyi tneri, hamaynkayin kentronneryn u dprots'nern ogtagortsum e rrazmakan npatakov*]. (in Armenian)
26. On improving the condition of the wounded and sick in active armies" Geneva, 1949. convention [*Gortsogh banaknerum viravorneri yev hivandneri vichaki barelavman masin*] *Zhnevi 1949 t'. konvents'ia*] (in Armenian)
27. Kavakavank church loses its original appearance, "Monitoring of the cultural heritage of Artsakh" [*Kavak'avank'I yekeghets'in kort's'num e ir nakhnakan tesk'y, «Arts'akhi mshakut'ayin zharrangut'yan mshtaditarkum*] (in Armenian)
28. The use of the Kataro monastery church for military purposes, "Monitoring of the cultural heritage of Artsakh", April 13, 2021 [*Kataro vank'i yekeghets'u ogtagortsumy rrazmakan npataknerov, «Arts'akhi mshakut'ayin zharrangut'yan mshtaditarkum», 13 aprili 2021*] (in Armenian)
29. **Kocharyan V.** International Law. Educational manual, Yerevan, Yerevan University Press, 2002, *Kocharyan V., Mijazgayin iravunk':Usumnakan dzerrnark, Yerevan, Yerevani hamalsarani hrat.*, (in Armenian)

Ընդունվել է / Принята / Received on: **14. 09. 2024**

Գրախոսվել է / Рецензирована / Reviewed on: **26. 10. 2024**

Հանձնվել է տպ. / Сдана в пч. / Accepted for Pub: **12. 12. 2024**

Տեղեկություններ հեղինակի մասին

Արմինե Հարությունի ՏԻԳՐԱՆՅԱՆ՝ ԵՊՀ մշակութաբանության ամբիոնի դասախոս, «Ամբերդ» հետազոտական կենտրոնի հետազոտող, մշակութային ժառանգության միջազգային փորձագետ, Երևան, ՀՀ, էլ. huugե՝ armine.tigranyan@ysu.am[https // orcid.org/0000-0001-5886-3667](https://orcid.org/0000-0001-5886-3667)

Armine Haruthyun TIGRANYAN:

Lecturer at the Chair of Culturology of YSU

Researcher at "Amberd" Research Center,

International Expert of Cultural Heritage, Yerevan RA

e-mail: armine.tigranyan@ysu.am[https // orcid.org/0000-0001-5886-3667](https://orcid.org/0000-0001-5886-3667)

Армине Арутюновна ТИГРАНЯН: лектор кафедры культурологии ЕГУ, исследователь центра "Амберт", международный эксперт культурного наследия эл. адрес: armine.tigranyan@ysu.am[https // orcid.org/0000-0001-5886-3667](https://orcid.org/0000-0001-5886-3667)